«Հաստատում եմ»
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար

Էլիզա Մկրտչյան

15 «մայիսի» 2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀԱՅՑՈՐԴ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՏԻԳՐԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՐՁ (ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)»

Ի. Բ. 00. 01-Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Անդրանիկ Տիգրանի Շահինյանի թեկնածուական ատենախոսության թեմայի **արդիականությունը** հիմնավորված է հայ ժողովուրդի պատմության ընթացքում բազմիցս միգրացիայի ուղի բռնելու միտվածությամբ: Միգրացիայի բնույթն ու ձևերը ժամանակի հետ անխուսափելիորեն փոխվում են, սակայն վերջին տասնամյակներին աչքի է ընկնում հատկապես աշխատանքային միգրացիայի կանոնավոր աճով: Այս երևույթը, ըստ էության, Հայաստանի խորհրդային տարիների վերջում ձևավորված ավանդույթների շարունակությունն է, երբ սեզոնային աշխատանքային արտագաղթն ուղղակիորեն ծառայում էր զարգացման նպատակներին: Այնուամենայնիվ, հետխորհրդային շրջանի աշխատանքային միգրացիան առաջացել է ավելի ծանր կենսապայմաններից՝ շրջափակում, ռազմական գործողություններ, գործազրկություն և մեծ մասամբ դարձել է ոչ թե առաջընթացի, այլ բնակչության գոյատևման հարկադիր ռազմավարություն: Արտաքին միգրացիայի բացասական հաշվեկշիռը, որն արդեն տասնամյակներ շարունակ մի կողմից լուրջ խոչընդոտ է հանդիսանում երկրի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Մյուս կողմից աշխատանքային միգրացիայի հիման վրա ձևավորվող տրանսֆերները նշանակալի ներդրում են առաջացնում հայաստանյան բնակչության սոցիալ–տնտեսական կայունության

ոլորտում: Այս մարտահրավերին դիմակայելու համար անհրաժեշտ է իրականացնել աշխատանքային միգրացիոն գործընթացների ընդհանուր օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման ու համակարգային ուսումնասիրություն: Երիտասարդները, որպես հասարակության ամենաշարժուն խավ, հանդիսանում են տարեկան արտագաղթի հոսքերի առյուծի բաժինը: Այս միտումն էլ ավելի է խորանում աշխարհի զարգացած երկրների կողմից վարվող բաց միգրացիոն քաղաքականության շնորհիվ, որն երիտասարդ մարդկանց համար դռներ է բացում դեպի ավելի լավ և բարեկեցիկ ապագա՝ ինչպես իրենց, այնպես էլ իրենց ընտանիքների համար: Ատենախոսության շրջանակում սոցիոլոգիական մեթոդների կիրառությամբ վեր են հանվել Շիրակի մարզի երիտասարդների աշխատանքային շարժունությունը և արտագաղթած երիտասարդների բարեկեցության հարցերը: Առանձին ուշադրություն է դարձվել նաև այն դրական գործոնների բացահայտմանը, որոնք կարող են նպաստել Հայաստանում միգրացիոն իրավիճակի բարելավմանը. դրանք են սոցիալ-տնտեսական զարգացումը, քաղաքացիական հասունացումը, տեխնոլոգիական առաջընթացը և այլն: Հեղինակի կողմից շեշտադրվել են հետազոտական մի շարք խնդիրներ՝ երիտասարդների շրջանում միգրացիայի դիմելու տնտեսական, կրթական, հոգեբանական պատճառներ, անվտանգության ապահովման նկատմամբ անվստահության, այլ բացասական գործոններով, վերլուծվեն Հայաստանում հետընդունման գործող մեխանիզմներն ու ձևերը, ինչպես նաև վերադարձած քաղաքացիների սոցիալականացման ու վերասոցիալականացման ընթացքում առաջացող դժվարությունները՝ փաստաթղթային բյուրոկրատական խոչընդոտներ, հոգեբանական հարմարվողականության խնդիրներ, ինչպես նաև սոցիալ-մշակութային վերաինտեգրման հետ կապված բարդությունները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Միգրացիոն գործընթացների և երիտասարդության որպես հատուկ դեմոգրաֆիական խմբի սոցիոլոգիական հետազոտությունները ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ունեն բազմակողմանի և բազմաշերտ դրսևորումներ: Հեղինակի կողմից իրականացվել է մասնագիտական գրականության խորը վերլուծություն թեմային համապատասխան, ինչպես դասական և ժամանակակից տեսաբանների հայեցակարգերի, այնպես էլ կիրառական սոցիոլոգիայի էմպիրիկ հետազոտողների, միջազգային

կազմակերպությունների զեկույցների և հաշվետվությունների տվյալների համեմատական վերլուծություն:(Օգտագործված գրականության ցանկը կազմում է 302 անուն)

Ատենախոսության գիտական դրույթների հիմնավորվածությունն ապահովվում է բարձր բացատրողական ներուժ ունեցող և ակադեմիական հանրության կողմից լայնորեն ճանաչված սոցիոլոգիական հայեցակարգերի, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության շրջանակներում կիրառվող տեղեկտվության ձեռք բերման քանակական և որակական մեթոդների համադրությամբ:

Ատենախոսությանը **կառուցվածքը** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ–ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափանիշներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է չորսական ենթագլուխներից և եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 206 էջ, նեռարյալ աղյուսակները և գծագրերը:

Ատենախոսության առաջին գլխում *Աշխատանքային միգրացիայի տեսությունն և երիտասարդական միգրացիայի առանձնահատկությունները ՀՀ-ում* վերլուծաբար ներկայացվել է աշխատուժի միջազգային միգրացիայի արդի սոցիոլոգիական տեսությունները, որի շրջանակներում շեշտը դրվել է միգրացիայի որպես սոցիալական երևույթ սահմանումների, միգրացիայի սուբյեկտ հանդիսացողների առանձնահատկությունների, միգրացիայի առաջացման պատճառների և հետևանքների լուսաբանման վրա: Անդրադարձ է կատարվել երիտասարդության, որպես միգրացիոն գործընթաց իրականացնողի էության, տեսակների, դրսևորման առանձնահատկությունների վրա: Հեղինակի կողմից միգրացիան դիտարկվում է որպես երիտասարդության սոցիալականացման և ինքնուրույնության՝ տնտեսական, անձնային, հոգեբանական, մասնագիտական կայացման նշանակալի գործոն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես ՀՀ–ում արտաքին միգրացիան կարգավորող օրենսդրական դաշտի և իրավական այլ հիմքերի վերլուծության վրա: Առաջին գլխի ավարտին հեղինակը իրականացրել է նաև երիտասարդների միգրացիան լուսաբանող 2019-2024թ. վիճակագրական տվյալների վերլուծությունն: Որի արդյունքում բացահատվել է դինամիկայի աճ աշխատանքային միգրացիայի երիտասարդացման և ժամկետների երկարացման աճ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ *Սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությունը* իրենից ներկայացնում է սոցիոլոգիական հետազոտություն ծրագրի մեթոդաբանական և մեթոդական հատվածը, թեմային համապատասխան մեթոդների ընտրության հիմնավորվածությունը, ընտրանքի հիմնավորվածությունը և հաշվարկը, հասկացությունների օպերալիզացումը, հետազոտությանը ադեկվատ գործիքակազմի մշակման հիմքերը: Որպես քանակական հարցման ընտրանքհեղինակ կողմից կիրառված մեթոդաբանական մոտեցումը համապատասխանում է ESOMAR-ի և AAPOR-ի միջազգային ստանդարտներին և ապահովում է հետազոտության արդյունքների վիճակագրական հուսալիությունը և ընդհանրացման վավերականությունը ՀՀ Շիրակի մարզի 13-35 տարեկան երիտասարդների համընդհանուր բազմության նկատմամբ (n=530): Փորձագիտական հետազոտության համար կիրառվել է նպատակային ընտրանքի մեթոդը և ընտրվել է 21 փորձագետ՝ ըստ նրանց գործունեության ոլորտի (ակադեմիական, պետական): Թեմայի շրջանակներում իրականացվել է նաև ֆոկուս խմբային մեթոդի կիրառությամբ միգրացիոն փորձառություն ունեցող ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի 25-30 տարեկան 22 երիտասարդներ հիմնախնդիրների բացահայտում: Քննարկումն իրականացվել է 2 ժամ: Երկրորդ գլխում հատուկ տեղ է զբաղեցնում Կոռելացիոն և ռեգրեսիոն մեթոդների կիրառման տեսական և կիրառական առանձնահատկությունների վերլուծությունը: Գլուխը ավարտվում է դաշտային փուլի կազմակերպման, իրականացման և ստացած արդյունքների հետագամ շակման գործընթացի նկարագրություն:

Ատենախոսության երրորդ գլուխը իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունն է: Կիսաձևայնացված հարցաթերթիկային հարցումն ուղղված էր պոտենցիալ միգրանտների և միգրացիոն միտվածություն ունեցող անձանց: Ֆոկուս խմբային հարցման արդյունքում վերհանվեց քննարկման մասնակիցներին հայտնի միգրացիայի տեսակները, երիտասարդների միգրացիայի դիմելու դրդապատճառները, ՀՀ տարածքում բարձր որակավորմամբ աշխատանք հնարավորությունները և այլն: Առավելապես քննարկման առարկա է դարնում վերադարձած միգրանտների մոտ նկատվող փոփոխությունները և իրենց հետ բերած նոր մշակույթը:

Ատենախոսության ուսումնասիրությունների արդյունքները պարունակում են կարևոր նորույթներ և կարող են կիրառվել կարիքահեն և գիտելիքահեն միգրացիոն քաղաքականության մշակման համար: Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքները հիմք են հանդիսանում Ա. Շահինյանի կողմից առաջադրված մի շարք **նորույթներ**.

- 2021-2024թթ. ճգնաժամային իրավիճակների նորահատուկ գործոններով (քովիդ, պատերազմ, արցախահայերի բռնի տեղահանություն) պայմանավորված երիտասարդների միգրացիոն միտվածության օբյեկտիվ և անաչառ սոցիոլոգիական գնահատումն ու ներկայացումը:
- Աշխատանքային միգրացիայի դիմած երիտասարդների (հետագայում կրկին հայրենիք վերադառնալուց հետո) բարձր վարձատրությամբ աշխատանք գտնելու հավանականության
  պարզաբանում:
- Մասնագիտության ընտրության խնդրով պայմանավորված երիտասարդների աշխատանքային միգրացիայի դիմելու հավանականության որակական վերլուծություն:
- Մերօրյա երիտասարդների համար նախընտրելի երկրների ցանկի և դրանք պայմանավորող հանգամանքների ներկայացում:
- Երիտասարդների զարգացման, սոցիալական վիճակի բարելավման, ընտանիք կազմելու, աշխատանք գտնելու և հետագա սոցիալականացման գործընթացներով պայմանավորված՝ աշխատանքային միգրացիայի դրական և բացասական ազդեցությունների ուսումնասիրությունը:
- Փորձագիտական հետազոտության միջոցով միջազգային պայմանագրերի կնքման, արտագնա աշխատանքների կազմակերպման և աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության հարցերի վերհանում:

Բարձր գնահատելով ատենախոսի կողմից կատարված աշխատանքը՝ ներկայացնում ենք որոշ նկատառումներ և առաջարկություններ.

- Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից իրականացված էմպիրիկ հետազոտության արդյունքների վերլուծությունները նույնպես իրականացվեր խնդիրների վերաբերյալ կիրառված մեթոդների համադրման եղանակով:

- Հաշվի առնելով Հայաստանյան ժողովրդագրական խնդրահարույց վիճակը, ցանկալի կլիներ, որ հեղինակը անդրադարձ կատարեր գիտականահեն առաջարկների երիտասարդների աշխատանքային միգրացիայի կանխարգելման և/կամ ռելոկացիայի կազմակերպան հիմնախնդրին:
- Ակնհայտ չի երևում երկրորդ գլխում հեղինակի կողմից այդպիսի մանրամասնությամբ ներկայացված կոռելացիոն և ռեգրեսիոն մեթոդների կիրառման տեսական և կիրառական առանձնահատկությունների անհրաժեշտությունը այլ վիճակագրական վերլուծության մեթոդների համեմատությամբ:
- Ցանկալի կլիներ, որ էմպիրիկ հետազոտության մեջ որպես խնդրի առանձնացված՝ *Բացահայտել և գնահատել միգրացիայի պատճառահետևանքային կապերը հասարակական կյանքի և տարածքային կազմակերպման վրա(էջ 96),* հետագայում ունենար նաև գնահատման հստակ ցուցիչներ:

Այս դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության շրջանակներում Ա. Շահինյանի կողմից կատարված աշխատանքի գիտական արժեքը և կարող են հիմք հանդիսանալ թեմայի հետագա ռաումնասիրությունների և հետազոտական աշխատանքների համար: Նորույթները և հետազոտության հիմնական արդյունքները տպագրվել են ՀՀ ԲՈԿ–ի կողմից արտոնագրված գիտական ամսագրերում: Սեղմագիրը պարունակում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, պաշտպանությանը ներկայացված նորույթները և կարևոր արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Տիգրանի Շահինյանի «Աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների մասնագիտական և սոցիալական կայացման փորձ (Շիրակի մարզի օրինակով)» ԻԲ 00.01 Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն: Նրանում ներկայացվող եզրակացություններրն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում երիտասարդների շրջանակներում արտաքին միգրացիայի ռիսկերի կարգավորման ռազմավարություններ մշակելիս: Թեկնածուական

ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, ուստի միջնորդում ենք ԵՊՀ–ի 013 Փիլիսոփայության և սոցիոլոգիայի Մասնագիտական խորհրդին Անդրանիկ Տիգրանի Շահինյանի շնորհել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ԻԲ. 00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի 11.05. 2026 թ. նիստում (արձանագրություն թիվ 10), որին մասնակցել են՝

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան՝ հ.գ.թ, պրոֆեսոր Ռ.Հ.Պետրոսյան, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ժ/պ՝ հ.գ.թ., դոցենտ Գ.Ա.Խաչիկյանը, ս.գ.թ. Ս. Ժ. Եղիազարյան, տ.գ.թ., դոցենտ Գ. Բ. Նալբանդյանը, փ.գ.թ., դոցենտ Ա. Ռ. Ջիջյանը, դոցենտ Ա. Եսայանը, դասախոսներ՝ Լ..Ա.Ռաշոյանը, Գ. Ա Ասատրյան, քարտուղար՝ Մ.Ղարիբյան:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի Սոցիոլոգիայի և
սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ժ/պ՝
հ.գ.թ, դոցենտ Գ. Ա. Խաչիկյան

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության
և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ՝
հ.գ.թ, պրոֆեսոր Ռ. Հ. Պետրոսյան

Գ.Ա. Խաչիկյանի և Ռ.Հ. Պետրոսյանի
ստորագրությունները հաստատում եմ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
Համալսարանի գիտական քարտուղար, մ.գ.թ դոցենտ Հ. Վ. Թադևոսյան

15.05.2026թ.